ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----------2022թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ. 498-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող ք. Երևան, Գայի պողոտայի հ. 19 հասցեում գտնվող վարչական շենքի 6-րդ հարկից (թվով 4 սենյակ) 65.27 քմ. ընդհանուր մակերեսով ոչ բնակելի տարածքը մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի կնքումը «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հետ՝ դրանում ներառելով նաև պայմանագրային հետևյալ պարտավորությունները.

1) Անհատույց օգտագործման իրավունքը գրանցելուց հետո, առնվազն 1 ամսվա ընթացքում սկսել տարածքի վերանորոգման աշխատանքները,

2) յուրաքանչյուր 6 ամիսը մեկ ներկայացնել գրավոր հաշվետվություն հիմնադրամի գործունեության և կատարված աշխատանքների վերաբերյալ,

3) տարածքի վերանորոգման աշխատանքներն ավարտել ոչ ուշ, քան այն սկսելուց հետո՝ 2 ամսվա ընթացքում,

4) աշխատանքներն ավարտելուց հետո տարածքն օգտագործել բացառապես հիմնադրամի գործունեության շրջանակում նախատեսված ծառայությունները մատուցելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի Ազգային տնօրեն Ս. Սարգսյանը 2021 թվականի նոյեմբերի 24-ին դիմել է Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին՝ խնդրելով Նոր Նորք վարչական շրջանի աշխատակազմի շենքում անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը ժամկետով տրամադրել 4 սենյակ՝ ծրագրի գործունեության շրջանակում նախատեսված ծառայությունները մատուցելու համար:

Մասնավորապես նշվում է, որ «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը նախաձեռնել է «Համակարգային խնդիրների վերհանում. աջակցություն երեխաների պաշտպանության ոլորտի բարեփոխումներին» ծրագրի իրականացումը: Ծրագրի ընդհանուր նպատակն է աջակցել խոցելի խմբի երեխաների անհատական ճանաչողական, զգացմունքային և սոցիալական զարգացմանը՝ որակյալ կանխարգելման ծառայությունների, համայնքահեն խնամքի և ապաինստիտուցիոնալացման ջանքերի միջոցով՝ ՄԱԿ-ի երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցին համահունչ:

Ծրագիրը մեկնարկում է 2021 թվականի դեկտեմբերի 1-ից՝ 41 ամիս տևողությամբ (մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը): Այն իրականացվելու է Երևան քաղաքում և Շիրակի մարզում: Ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրվելու են սոցիալական խորհրդատվական, բնաիրային, հոգեբանական աջակցություններ, ինչպես նաև ապաինստիտուցիոնալացման գործընթացի շրջանակներում ստեղծվելու են համայնքահեն ծառայություններ՝ ուղղված երեխաների իրենց կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորման գործընթացում աջակցելուն:

Տրամադրման համար քննարկվող 4 սենյակներում հիմնադրամի կողմից ներկայացված ծրագրի համաձայն աշխատելու է բազմամասնագիտական թիմ՝ բաղկացած ծրագրի համակարգողից, սոցիալական աշխատողներից, հոգեբանից:

Վերջիններիս կողմից ծրագրի գործունեության շրջանակում մատուցվելու են ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին: Նշված ծառայությունները ուղղված են լինելու՝ սոցիալ-հոգեբանական, առողջապահական, բնաիրային աջակցություններ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում իրավաբանական խորհրդատվություն տրամադրելուն: Ծրագրի շրջանակներում նախատեսված են նաև դասընթացներ շահառուների համար, որոնք ուղղված են ծնողավարման հմտությունների զարգացմանը, ծնող-երեխա փոխհարաբերությունների բարելավմանը, սթրեսային իրավիճակների հաղթահարմանը, մասնագիտական կողմնորոշմանը և այլն:

Ծառայությունները տրամադրվելու են երկուշաբթիից ուրբաթ, ժամը 09:00-18:00:

Հիմնադրամն իր կողմից իրականացնելու է այդ սենյակների վերանորոգումը, ինչպես նաև պատրաստակամ է իրականացնելու նաև առաջարկվող ևս 4 սենյակի կոսմետիկ վերանորոգում:

Հիմնադրամի կանոնադրության և ներկայացված ծրագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին աջակցելը բխում է երեխաների լավագույն շահերից:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ